**Արձանագրություն N 2-2**

**ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/4 ծածկագրով ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու Ն. Ա. Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան

18.03.2026թ.
ժամը 10:30

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Գ. Գևորգյան |
| Անդամներ՝ | Լ. Մելիքյան |
| | Կ. Հարությունյան |
| | Ա. Եղիազարյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Մանուչարյան |

Բացակայում էր հանձնաժողովի անդամ Ա. Աչոյանը

**1. Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի ուսումնասիրության մասին**

(Գ. Գևորգյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվել է պատասխան գրությունը:

1.2 Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ՝

**«ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-ի** կողմից հայտով չեն ներկայացվել

- Աշխատակազմի մասին տվյալները՝ հրավերի Հավելված N 1.2-ը,
- հրավերով պահանջվող լիցենզիան և լիցենզիայի ներդիրները,
- համանման պայմանագիրը և հիմնավորող փաստաթղթերը:

**«ԱԳԷԱ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտով

- Հավելված N 1.2-ին կից տեղեկանքում բոլոր մասնագետների CV-երի մեջ ընդհանուր աշխատանքային փորձառությունը նշված չէ:
- «Շինարարության որակի տեխնիկական հսկողություն» լիցենզիայի «էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ)» ներդիրը վավեր չէ:

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել «Սեյսմշին» ՍՊԸ-ին և «ԱԳԷԱ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 19.03.2026թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումները ներկայացվելու դեպքում, հայտերը կգնահատվեն բավարար, հակառակ դեպքում հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն: Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/4 ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի a.manucharyan@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ-0:*

**2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին**

---

(Գ. Գևորգյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 20.03.2026թ. ժամը 10:30-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------------------- Գ. Գևորգյան

Անդամներ՝ ---------------------------------------- Լ. Մելիքյան

---------------------------------------- Կ. Հարությունյան

---------------------------------------- Ա. Եղիազարյան

Արձանագրությունը կազմեց

հանձնաժողովի քարտուղար՝ ---------------------------------------- Ա. Մանուչարյան